ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Մալիշկա համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Մալիշկա, (0281) 95406 (0281) 2-20-84, malishka.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 84

04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019 թվականի

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԱՆԴԱՄ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 30-րդ կետերով, 46-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և ՀՀ Վայոց ձորի մարզպետի 20.03.2014թ.-ի թիվ 15 որոշման թիվ 1 հավելվածով հաստատված «ՀՀ Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կանոնադրության» 3-րդ գլխի 10-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում Մալիշկա համայնքի ավագանու կողմից խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու նպատակով հայտարարել մրցույթ:
2. Հաստատել խորհրդի կազմում ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ ավագանու կողմից առաջադրելու մասին մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ՍԱՄՎԵԼ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի Մալիշկա համայնքի ղեկավարի պաշտոնակատարի
04 դեկտեմբերի 2019 թվականի թիվ 84 որոշման

ՀՀ Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու մասին

ՀՀ Վայոց ձորի մարզի Մալիշկայի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ ՀՀ Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու մասին:

Խորհրդի ոչ պետական հատվածին երկայացնող անդամը պետք է լինի 16-ից 30 տարեկան երիտասարդ և պետք է բավարարի հետևյալ չափանիշներին՝

1. Երիտասարդներին առնչվող կրթական, սոցիալական, զբաղվածության, առողջապահական և մշակութային խնդիրներին տիրապետելը
2. Երիտասարդական կազմակերպություններում տարբեր ծրագրերին կամ միջոցառումներին մասնակցության փորձ
3. Երիտասարդական քաղաքականության բնագավառում միջազգային փորձի, պետական և հանրային կառավարման համակարգի, ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման առանձնահատկությունների իմացություն:

Հավասար պայմանների դեպքում որպես առավելություն են դիտվում Երիտասարդական քաղաքականության բնագավառում իրականացված փորձագիտական աշխատանքները կամ հրապարակումները, ոչ ֆորմալ կրթության ոլորտի գիտելիքները և գործնական աշխատանքի փորձը:

Մրցույթը կկայանա 2019 թվականի դեկտեմբերի16-ին:

Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են դիմել Մալիշկայի համայնքապետարանի աշխատակազմ հետևյալ հասցեով գ. Մալիշկա 1-ին փ. շենք 1 0281 95 406

Դիմումների տրման վերջնաժամկետն է՝ 13/12/2019թ.;

Դիմող քաղաքացիները Մալիշկայի համայնքապետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն՝

ա/դիմում համայնքապետարանի աշխատակազմի անունով /դիմումի ձևը ազատ է/,

բ/խորհրդի անդամին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, դիպլոմի/ների/, վկայականի/ների/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

գ/մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափի,

դ/անձնագրի պատճեն:

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9.00-ից մինչև 18.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: